County of Los Angeles
DEPARTMENT OF
PUBLIC SOCIAL SERVICES

Արդյո՞ք Հանրային բեռը (Public Charge) վերաբերում է ինձ

ԱՄՆ-Ի ՔԱՂԱՔԱՑԻ

Եթե դուք ԱՄՆ-ի քաղաքացի եք.

ՉԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

ԿԱՆԱՉ ՔԱՐՏ ՈՒՆԵՑՈՂ

Եթե դուք երկարացնում եք կանաչ քարտը կամ դիմում եք ԱՄՆ-ի քաղաքացի դառնալու համար.

ՉԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ*

***ՆՇՈՒՄ.** Եթե դուք նախատեսում եք բացակայել երկրից ավելի քան 180 օրով, **Հանրային բեռը կարող է ձեզ վերաբերվել** և լավ գաղափար է խոսել ներգաղթի փաստաբանի հետ:

ՀԱՏՈՒԿ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՐԴ/ՈՒՆԵՑՈՂ

Եթե ունեք հետևյալ կարգավիճակներից մեկը.

- Փախստական
- Ապաստան հայցող
- Կանանց նկատմամբ բռնության ակտի դիմումատու
- Ժամանակավոր պաշտպանված կարգավիճակի դիմորդ/ունեցող
- U և T վիզայի դիմորդ/ ունեցող
- Հատուկ ներգաղթյալ անչափահաս
- Այլ ոչ քաղաքացիություն չունեցող խմբեր (օրինակ՝ DACA-ի երկարացման դիմորդներ)

ՉԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

ԿԱՆԱՉ ՔԱՐՏԻ ԿԱՄ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՐԴՆԵՐ, ՈՐՈՆՔ ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԱՄՆ-Ի ՆԵՐՍՈՒՄ

Եթե որոշում եք դիմել կանաչ քարտ կամ վիզա ստանալու համար ԱՄՆ-ի ներսում և չեք պատկանում ազատված ներգաղթային կարգավիճակի, ինչպես նկարագրված է վերևում:

ԱՅՍ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՆԿԱՏԻ ԿԱՌՆՎԻ.

- CalWORKs
- Ընդհանուր Օժանդակություն
- Երկարաժամկետ խնամքի Medi-Cal
- Դրամական Օժանդակության Ծրագիր Ներգաղթածների համար
- Լրացուցիչ Ապահովագրական Եկամուտ

ԿՎԵՐԱԲԵՐՎԻ

ԲԱՑԻ ԱՅԴ, ՀԵՏԵՎՅԱԼ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՇՎԻ ԿԱՌՆՎԻ ՍԿՍԱԾ 2020 ԹՎ. ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ

- CalFresh
- Բնակարանի ապահովում
- Medi-Cal*

* Նոր հանրային բեռի կանոնները հաշվի չեն առնի Medi-Cal-ի նպաստները, որոնք ստացվել են շտապ օգնության ծառայությունների համար կամ Medi-Cal 21 տարեկանից ցածր երեխաների, հղի կանանց կամ ուրիշների կողմից ստացված: Խոսեք փորձագետի հետ խորհրդատվության համար նախքան ձեր նպաստների վերաբերյալ որոշումներ կայացնելը:

ԿԱՆԱՉ ՔԱՐՏԻ ԿԱՄ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՐԴՆԵՐ, ՈՐՈՆՔ ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԱՄՆ-Ի ԴՈՒՐՍ:

Եթե գտնվելով ԱՄՆ-ից դուրս պլանավորում եք դիմել կանաչ քարտի կամ վիզայի համար, **նոր Հանրային բեռ կանոնը ԿԱՐՈՂ Է ձեզ վերաբերել:** Որոշումներ կայացնելուց առաջ խոսեք փորձագետի հետ, ձեր գործի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար:

ԿԱՐՈՂ Է ՎԵՐԱԲԵՐՎԵԼ

ARMENIAN

Տեղեկության և ուղղորդման վերաբերյալ ձեր տարածքում անվճար կամ ցածր գնով իրավաբանական ծառայությունների համար դիմեք Լոս Անջելես մարզի ներգաղթի հարցերով զբաղվող գրասենյակին (800) 593-8222 հեռախոսահամարով կամ այցելեք՝ oia.lacounty.gov կայք: